

Գր. Սարգսյան

Մ. ԱՃԵՄՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԸ

(Բուճաստեղծի ծծնդյան 125-ամյակի առթիվ)

Հայ նոր գրականության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի ճանաչված բանաստեղծ Մկրտիչ Աճեմյանը: Նա պատկանում է գրական այն սերունդին, որը հրապարակ գալով անցյալ դարի 70—80-ական թվականներին՝ ամրապնդեց ռեալիստական պոեզիայի դիրքերը արևմտահայ հատվածում և նախադրյալներ ստեղծեց նրա հետագա բուռն զարգացման համար:

Աճեմյանը շարունակեց ու զարգացրեց նախնիաց շրջանի մեր բանաստեղծության առաջավոր տրագիգիաները, ընդլայնեց իրականության գեղարվեստական ընկալման սահմանները և պարզ ու ժողովրդաշունչ տողերով արտահայտեց հարստահարվող մասնային տրամադրությունները: Նրա ստեղծագործական մտորումների առանցքը դժբախտապես աշխատավոր մարդն էր՝ իր սոցիալական կեցության մեջ, իր սրտի ու մտքի բազմազան պահանջներով: Արձագանքելով ժամանակի մի շարք հուզող հարցերի՝ նա իր գրիչը դարձրեց հատուկ զենք և գեղարվեստական խոսքով մասնակցեց տիրող կարգերի դեմ ծավալված դեմոկրատական շարժմանը:

Աճեմյանի պոեզիան տոգորված է կյանքի շնչով, իրականության հանդեպ ունեցած ֆենադատական վերաբերմունքով: Շրջապատից առնված տիպական փաստերի ու երևույթների բանաստեղծական ընդհանրացման միջոցով նա բացահայտեց իր ժամանակի լույսերն ու սովերները և դրանով իսկ նպաստեց մեր հասարակական առաջընթացին: Շեշտված դեմոկրատիզմ, ժողովրդական կյանքի անմիջական զգացողություն, կենսական ճշմարտացիություն և արտահայտչական պարզություն,— ահա թե ինչով է հատկանշվում Աճեմյանի ստեղծագործական վաստակը, որ աչքի է ընկնում նաև մոտիվների ու գրական ձևերի բազմազանությամբ:

Անվանի բանաստեղծը գրել է քնարական, խոհական, պատմողական, վիպերգական բնույթի գործեր, որոնցից մի քանիսում հմտորեն օգտագործել է նաև երգիծանքը: Նա սուր ծաղրի է ենթարկել բուրժուական իրականության հակամարդկային էությունը և անողորմարար մերկացրել վերնախավերի այլանդակ բարքերը, նրանց էգոիզմն ու կեղծ բարեպաշտությունը: Ազգի աշխարհիկ ու հոգևոր «պետերը», որոնք ձուլում են միայն «գերության շղթա», սպանիչ բնութագիր են ստացել Աճեմյանի գրչի տակ:

Իր ինքնուրույն և թարգմանական գործերով Աճեմյանը հարստացրեց արևմտահայ պոեզիան, արժանի տեղ նվաճելով նրա երախտավոր գործիչների շարքում: Նրա լավագույն երկերը վարդարեցին դպրոցական դասագրքերը և կարևոր դեր խաղացին նոր սերնդի գեղարվեստական դաստիարակության գործում:

Չնայած այդ ամենին, Աճեմյանի կյանքն ու ստեղծագործությունը տակավին գրեթե չեն ուսումնասիրված: Ասում ենք «գրեթե», որովհետև նրա մա-

սին եղած հատ ու կենտ հողավածները տառապում են նույնիսկ փաստական սխալներով, էլ չենք խոսում մեթոդոլոգիական արատների մասին:

Դեմոկրատ բանաստեղծի գրական վաստակը թերագնահատվել ու ժխտվել է մանավանդ բուրժուա-նացիոնալիստական քննադատության կողմից, որի ժամանակակից քուրմերը նույնիսկ կասկածի տակ են առնում նրա ստեղծագործական ինքնուրույնությունը, հայտարարելով, թե նա «գուրկ է գրական խառնվածքե և նկարագրե»¹, թե «անոր գործը կը պատկանի պատմության, այսինքն դերեզմանին»² և այլն:

Նմանօրինակ տենդենցիոզ և ըստ էության թշնամական մոտեցումը, ինչպես և պետք էր սպասել, բացահայտորեն հակասում է այն ընդհանուր համակրական վերաբերմունքին, որ մեր դեմոկրատական կուլտուրայի գործիչները ցուցաբերել են Աճեմյանի ստեղծագործության նկատմամբ:

Այսպես, մի այնպիսի խստապահանջ արվեստագետ, ինչպիսին Պարոնյանն էր, ժամանակին քննադատելով բանաստեղծի մի քանի թույլ ուտանավորներ, միաժամանակ խոստովանել է, որ «յուր գործը, կարելի չէ ուրանալ, ունի կոկիկ և սիրուն էջեր»³, ուստի և սրտանց շնորհավորել է հեղինակին նոր գրքի առթիվ:

Աճեմյանի մասին դրվատանքի խոսք է ասել նաև Արտ. Հարությունյանը, որը նրա մեջ տեսնելով «ճշմարիտ բանաստեղծին», գրել է. «Մեր ժամանակի լավագույն բանաստեղծն է անիկա, համեստ երազներուն և ժուժկալ քնարերգության մը բույնը»⁴:

Ո՛չ միայն արևմտահայ, այլև՝ արևելահայ գրողներից մի քանիսը առիթ են ունեցել խոսելու Աճեմյանի մասին և ըստ արժանվույն գնահատելու նրա ստեղծագործությունը: Նրա նկատմամբ դրականորեն է արտահայտվել, օրինակ, Վրթ. Փափազյանը, որը բանաստեղծին բնութագրել է որպես «քաջ արվեստագետ»⁵:

Ուշագրավ է նաև, որ Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը և նույն Փափազյանը 1910 թ. հրատարակած «Հայ գրողներ» վեճնագրով իրենց քրեստոմատիայի մեջ պատշաճ տեղ հատկացնելով Աճեմյանին, նրան համարել են «թյուրքահայ անդրանիկ բանաստեղծներից մեկը»⁶ և առանձնապես ընդգծել նրա հարուստ և աճբանագրոս հանգաբանությունը:

Այս ամենի լույսի տակ առավել պարզ է դառնում, թե որքան հասունացած խնդիր է Աճեմյանի կյանքի ու ստեղծագործության համակողմանի ուսումնասիրությունը, որ մեծապես կօգնի նաև արևմտահայ պոեզիայի զարգացման պրոցեսի գիտական լուսաբանմանը:

Սույն հոդվածը մի համեստ քայլ է Աճեմյանի ստեղծագործական կյանքի վաղ շրջանի ուսումնասիրության, մանավանդ, որ այդ էտապը տակավին հետազոտված չէ:

1 Մ. Թեոֆիլյան, Դար մը գրականություն, Գահիրե, 1955, էջ 207:

2 Հ. Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 3, 1954, էջ 82:

3 «Երկար», Երգիծական հանգես, 4. Պոլիս, 1887, էջ 141:

4 «Արևելյան մամուլ», Չմյուռնիս, 1902, էջ 504:

5 Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 718:

6 «Հայ գրող եր», Բ հատոր, Թիֆլիս, 1910, էջ 804:

1

Ինչպես արևմտահայ դրողներից շատերի, այնպես էլ Մ. Աճեմյանի կյանքի մասին դժբախտարար քիչ բան է հայտնի:

Աճեմյանը ծնվել է 1838 թ. հուլիսի 19-ին, Կ. Պոլսի հայաշատ թաղերից մեկում՝ Միջազյուղում: Նրա հայրը՝ Հովակիմ Աճեմյանը հասարակ մարդ էր, «պարզ գործավոր մըն», որ հազիվ էր կարողանում հայթայթել իր ընտանիքի ամենօրյա ապրուստը:

Ըր նախնական կրթությունը ապագա բանաստեղծը ստացել է Թարգմանչաց վարժարանում, իսկ հետո ընտանիքի տեղափոխման պատճառով հաճախել է Բերայի նարեկյան դպրոցը: Այնուհետև սովորել է Սազըզ Աղաջիի Մխիթարյան դպրոցում, ուր և դրսևորել է ուշիմություն, աշխատասիրություն և օրինակելի վարք, որոնց շնորհիվ նվաճել է ուսուցիչների համակրանքն ու սերը:

Հաշվի առնելով ուսումնածարավ պատանու փայլուն տվյալները՝ 1852 թ. նրան ուղարկում են Վենետիկ, ուր և ընդունվում է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը: Այստեղ նա աշակերտում է Ղ. Ալիշանին, որ դասավանդում էր հայկաբանություն, գրականություն և պատմություն: Անվանի բանաստեղծ-գիտնականը իր սանի մեջ բորբոքում է ջերմ սեր, հետաքրքրություն դեպի ուսումն ու գիտությունը և նրան տոգորում հայրենասիրական գաղափարներով:

Շուրջ վեց տարի մնալով Վենետիկում՝ Աճեմյանը հարստացնում է իր գիտելիքները, ընդլայնում իր մտահորիզոնը: Դրան զգալապես նպաստում է այն հանգամանքը, որ նա արագորեն տիրապետում է մի շարք լեզուների (ֆրանսերեն, իտալերեն, հունարեն և այլն), որոնք և լայն հնարավորություն են ընձեռում նրան հաղորդակից դառնալու համաշխարհային գրականությանը, բնագրերով կարդալու և ռուսումնասիրելու մասնավորապես արևմտա-եվրոպական գրողների երկերը:

Խորամուկ լինելով հայրենի և օտար մշակույթի մեջ, Աճեմյանը տարվում է բանաստեղծությամբ և հենց Մխիթարյան հեղինակների, մասնավորապես հայրենաբաղձ Նահապետի ազդեցությամբ էլ տալիս իր գրական նախափորձերը: Դրա հետ միաժամանակ նա հակվում է դեպի նկարչությունը, ուր նույնպես երևան է բերում ստեղծագործական ձիրք:

Ավարտելով ուսման ընթացքը, 1858 թ. քսանամյա Աճեմյանը վերադառնում է ծննդավայր: Շատ չանցած նա ծառայության է մտնում Պոլսի հեռագրական վարչության մեջ, ուր և աշխատում է մոտ կես դար: Այդ ժամանակամիջոցում նա տարբեր առիթներով լինում է գավառներում, մոտիկից ծանոթանում է ժողովրդի կյանքին, շփվում է աշխատավոր մարդկանց հետ և հաղորդակից դառնում նրանց ամենօրյա վշտերին:

Պարտականության բերումով Աճեմյանը մեկնում է նաև զանազան երկրներ, այցելում Վալոնա, Շվեդիա, Վառնա և այլուր, որտեղից ստացած տպավորությունները նույնպես հարստացնում են նրա կենսափորձը: Ստեղծագործող մարդու սուր գիտողականությամբ նա զննում է կյանքը, տեսնում այն ահավոր տառապանքները, որ բաժին են ընկել աշխատավոր մարդկանց ամենուրեք: Աճեմյանը ճանաչում է շահագործման և բռնության վրա հիմնված բուրժուական հասարակարգը և երես դարձնելով նրանից՝ մոտենում պոլսահայ դեմոկրատական մտավորականությանը, որն արդեն գործնական պայքար է

ծավալում ոչ միայն կղերա-պաշտականության ռեակցիայի, այլև բուրժուազիայի դեմ:

Պատահական չէ, որ ուրիշ կարող երիտասարդների հետ միասին (Բարդուղ Թաթարյան, Համբարձում Իսիկյան և այլն) Աճեմյանը շուտով ընդգրկվում է Սրվաճյան-Պարոնյան դադափարական զինակցության ոլորտը և շեշտակի հարվածներ հասցնում կղերի և ամիրայության սպասավորներին: Հայտնի է, օրինակ, որ Սրվաճյանը, ի հակակշիռ փառամուլ ու իշխանատենչ Խ. Գալֆայանի «Հայ ապրինք» ուտանավորի, հարկ համարեց «Մեղուի» էջերում արտատպել Աճեմյանի համանուն պարողիան՝ կցելով հետևյալ ծանոթությունը. «Ժպիտք և արտասուք» դրքեն: Տեր խորեն եպիսկոպոս «Հայ ապրինք» հանգով քերթված մը գրած էր: Պարոն Մ. Աճեմյանն ալ այս քերթվածը գրած է կարծես անոր ի պատասխան»⁸:

Կարելի է նույնիսկ ենթադրել, որ հենց այդ պայքարի մթնոլորտում էլ ձևավորվեց Աճեմյանի ստեղծագործական դեմքը, արդասավորվեց նրա երգիծական տաղանդը, որ արտացոլում է դեմոկրատական ուժերի քաղաքական ինքնագիտակցության զարթոնքը:

Տոգորված ժամանակի առաջավոր գաղափարներով, Աճեմյանը, չնայած իր պաշտոնական դիրքին, եռանդուն մասնակցություն է ցուցաբերել արևմտահայ ազգային-կուլտուրական կյանքին: Տարբեր ժամանակներում նա եղել է Պեշիկթաշի Մաքրուհյան վարժարանի հոգաբարձու, նույն բնակավայրի Թաղական խորհրդի անդամ, Ազգային ժողովի սլաղամավոր և այլն:

70-ական թվականների սկզբից Աճեմյանը ակտիվորեն աշխատակցել է պարբերական մամուլին և որոշ ժամանակ նույնիսկ խմբագրել տնտեսական հարցերով զբաղվող «Տնտես» ամսօրյա հանդեսը: Վերջինիս էջերում նա հրապարակել է ինքնուրույն և թարգմանական մի շարք գործեր («Առ մշակ», «Բարի խորհուրդ», «Թողնաք», «Թուխ և ճերմակ ամպեր», «Պոսֆոր», «Ճգնավոր մուկը», «Պարապ ժամերու համար» և այլն), որոնցով և դարձավ ճանաչված ու սիրված բանաստեղծ-թարգմանիչ:

Դրա հետ միաժամանակ Աճեմյանը մեծ հետաքրքրություն է ունեցել դեպի թատրոնն ու դրամատուրգիան: Իր դասընկերների՝ Բ. Բերդյանի, Ս. Բղլյանի հետ մեկտեղ նա կարևոր դեր է խաղացել արևմտահայ ազգային թատրոնի զարգացման գործում՝ դառնալով նրան «բարոյապես նպաստողներին» մեկը⁹: Անձնական-բարեկամական սերտ կապեր հաստատելով թատերական գործիչների հետ՝ նա ամեն կերպ խրախուսել ու աջակցել է նրանց և իր հերթին ստեղծագործական մղումներ ստացել նրանցից: Ըստ երևույթին հենց նրանց թելադրանքով է Աճեմյանը գրել «Ծեր սիրահար» վերնագրով կատակերգությունը, որը և 1870 թ. բեմադրվել է նաուսի թատրոնում:

Թե ինչ էր ներկայացնում բանաստեղծի դրամատուրգիական թոթովանքը, դժվար է ասել. հայտնի է միայն, որ նրա մեջ ևս չի եղել կանացի կերպար: Պետք է ենթադրել, որ բեմական տեսակետից էլ չի փայլել այն, և հավանորեն հենց այդ պատճառով հեղինակը խուսափել է հրատարակել իր թատերերգությունը, որի ձեռագիրն էլ չի պահպանվել:

Նույն թատրոնի համար Աճեմյանը թարգմանել է Շիլլերի «Ավազակները»:

⁸ «Մեղու», Կ. Պոլիս, 1872, № 66:

⁹ «Հայ հանրագիտակ», Ա., Պուրբը, 1938, էջ 114:

1909 թ. Աճեմյանը հեռանում է աշխատանքից և այնուհետև վարում մեկուսացած կյանք, մերթ ընդ մերթ զբաղվելով դրական-ստեղծագործական աշխատանքով և կամ նկարչությամբ ու երաժշտությամբ:

Բանաստեղծը վախճանվել է 1917 թ. մայիսի 21-ին, 79 տարեկան հասակում:

* * *

Աճեմյանը զրել սկսել է շատ վաղ հասակից, տակավին ուսումնառության տարիներին: Այդ շրջանին են վերաբերում նրա դրական նախափորձերը, որոնք մեծ մասամբ զրված են գրաբար և իրենց ոճով ու բնույթով կրում են Մխիթարյան բանաստեղծների ազդեցությունը:

Դրա լավագույն ակադեմիկոսն է «Վահագն» դյուցազնապոեմը (1871 թ.), որով փաստորեն սկսվում է հեղինակի ստեղծագործական կյանքը:

Նյութ առնելով հայոց պատմության հնագույն շրջանից՝ Աճեմյանը կերտել է էպիկական բնույթի ծավալուն մի երկ, ուր պատկերված է Երվանդյան Տիգրանի որդի Վահագնի հերոսական կերպարը: Սակայն որքան էլ նյութի ու լեզվի տեսակետից հեղինակը կապված է կլասիցիզմի հետ, այնուամենայնիվ աշխատել է իր պոեմին հաղորդել ուսմանտիկական ուժեղ շունչ: Դա արտահայտվել է ոչ միայն դեպքերի ու դեմքերի ներքին լարվածության ու նկարագրական կենդանության մեջ, այլև՝ լիրիկական այն անկաշկանդ զեղումներում, որոնցով հեղինակը դրսևորել է հայրենասիրական տրամադրություններ: Ուրիշ խոսքով ասած՝ տրագիկոն թեմայի գեղարվեստական մշակման մեջ հետևելով Ալիշանին՝ Աճեմյանը ևս մտցրել է մարտաշունչ ոգի, ջերմ հուզականություն և դրանցով իսկ հակադրվել կլասիցիստական սխեմատիկ մտածողությանը: Նրա մոտ նույնպես պատմական անցքերն ու հերոսները հաճախ ներկայացված ու գնահատված են անհատական ընկալմամբ, որպիսի հանգամանքը պոեմին տվել է անմիջականություն, շարադրանքը դարձրել աշխույժ:

Դրաբարով են գրված Աճեմյանի պատմա-հայրենասիրական բնույթ ունեցող մի շարք երկեր ևս («Մահ Տիրանա», «Ի մարտ Հայկա», «Պատերազմ Նպատ լերին» և այլն), որոնցով նա ձգտել է քաջ նախնիների հերոսական օրինակով ողելնչել ժամանակակից սերնդին, նրա մեջ վառ պահել ազատասիրության ու հայրենասիրության ոգին: Այդ նպատակով է նա վերակենդանացրել Հայկ Նահապետի և Տիրան արքայի կերպարները, խանդավառ տողերով երգել Նպատ լեռան մոտ տեղի ունեցած հերոսամարտը պարսկական նվաճողների դեմ և այլն:

Բայց հարկավ նմանօրինակ գործերը, որ պատկանում են հեղինակի ստեղծագործական վաղ շրջանին, թե՛ ձևի և թե՛ բովանդակության տեսակետից գրեթե որևէ նոր բան չեն ավելացնում մեր պոեզիային: Դրանցով չէ, որ հեղինակը գեղարվեստորեն արձագանքեց իր ժամանակի հրատապ հարցերին և հուշակվեց որպես տաղանդավոր բանաստեղծ:

Աճեմյանի բանաստեղծական խոսքի թարմությունը այն է, որ նա կարողացավ հաղթահարել կլասիցիզմի կաշկանդիչ ազդեցությունը և վճռական շրջադարձ կատարել դեպի ժամանակակից կյանքի պատկերումը: Մի կողմ թողնելով պատմա-ավանդական թեմատիկան ու նրա հետ կապված գրաբարը՝ նա խորամուխ եղավ շրջապատող երևույթների մեջ և ժողովրդական պարզ ու հասկանալի 8—6

կանալի լեզվով վերարտադրեց մարդկային ունի հույզեր ու խոհեր, որոնց աղբյուրը իրականությունն էր, կյանքն իր բազմազան արտահայտություններով: Ոչ թե ստատիկ վիճակներ ու վերամբարձ ոճեր, այլ քնարական վերապրումներ ու կենսական տպավորություններ, սրտի ու մտքի ազնիվ ձգտումներ,— ահա թե ինչն է բնորոշում Աճեմյանի բանաստեղծական դեմքը, որ ցույց նախ և առաջ «Ժպիտք և արտասուք» վերնագրով ժողովածուում (1871 թ.): Դրան հաջորդեցին «Լույս և ստվերք» (1887 թ.), «Փարսան հովեր» (1892 թ.) և «Թըրթըռում հանգեր» (1908 թ.) ժողովածուները, որոնցից վերջինը ընդգրկում է հեղինակի գրական ուղեգնացության գլխավոր մոմենտները:

Այդ արտահայտիչ վերնագրերը առավելագույն ցայտունությամբ դրսևորում են Աճեմյանի կենսազգացողության ունիստական բնույթը և իրականության արտացոլման եղանակը: Ակնհայտ է, որ հեղինակը գիտակցորեն ձգտում է վերարտադրել կյանքն իր հակադիր կողմերով, ցուցադրել իր ժամանակի լույսերն ու ստվերները և նրանց նկատմամբ հստակ դիրքորոշում տալ ընթերցողին:

2

Որպես ստեղծագործող Աճեմյանը հայտնի դարձավ մի այնպիսի ժամանակ, երբ արևմտահայ բանաստեղծությունը սերնդափոխ էր լինում:

Վաղուց լռել էր Ալիշան-բանաստեղծը, այլևս չկային Պեշկեթաշլյանն ու Դուրյանը, որոնցից առաջինի երկերի ժողովածուն լույս տեսավ 1871 թ., իսկ երկրորդինը՝ 1872 թ.: Հենց այդ տարիներին էլ հրապարակի վրա երևաց Աճեմյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն:

Իր գրական սկզբնաքայլերից Աճեմյանը թեպետ այս ու այն չափով շարունակեց նախորդ սերնդի սկսած գործը, բայց և դրա հետ միաժամանակ թե՛ նյութի և թե՛ նրա գաղափարա-գեղարվեստական բացահայտման իմաստով բերեց որոշ նորություն: Ինչպես ասվեց, նա իր ուշադրությունը կենտրոնացրեց ներկայի վրա և կյանքից առնված պատկերներով վերարտադրեց անհատի ներքնաշխարհը՝ իր անձնական ու հասարակական ապրումների բազմազանությամբ: Իրավացի է բանաստեղծը, երբ իր վաղ շրջանի երգերից մեկում գրել է.

Զվարթ մուսա, սերդ ինձ հայալ,
Գիտեմ սիրել, խնդալ ու լալ...¹⁰

Այս տողերը, որ կարող են բնաբան լինել Աճեմյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուի համար, դրսևորում են հեղինակի քնարական խառնըվածքն ու անմիջականությունը: Սևր, կարոտ, վիշտ, տրտունջ,—ահա այն տրամադրությունները, որ թրթռացնում են բանաստեղծի քնարը՝ ոմնկնդիր կյանքի ձայներին: Ըստ այդ էլ նրա ժողովածուում տեղ են գտել կյանքի ու սիրո բազմաթիվ ևրգեր, որոնք գեղարվեստական տեսակետից թեև երբեմն անկատար են, բայց շատ բան են ասում հեղինակի կենսազգացողության, նրա ըստեղծագործական մեթոդի մասին:

Բանն այն է, որ օբյեկտիվ իրականության փաստերն ու երևույթները արտացոլելիս Աճեմյանը զբաղվում է ոչ թե ընդհանուր ու վերացական դատողություններով, այլ ձգտում է պահպանել վերարտադրվող նյութի կոնկրետ բովան-

10 Մ. Աճեմյան, Ժպիտք և արտասուք, Կ. Պոլիս, 1871, էջ 16:

դակությունը և այն արտահայտել զգայական պատկերներով: Ի տարբերություն կլասիցիզմի և ռոմանտիզմի ներկայացուցիչների, որոնք տարվելով վերացական ընդհանրացումներով՝ առանձնապես մտահոգված չէին տալու տվյալ երեւոյթի զգայապես շոշափելի պատկերը և դրանով իսկ բացահայտելու նրա էությունը, Աճեմյանը աշխատում է հարազատ մնալ իրականությանը և այն ներկայացնել զգայական կոնկրետությամբ:

Այդ տեսակետից ուշագրավ են նրա սիրո երգերը, որոնք անձնական ապրումների արգասիք լինելով հանդերձ դրսևորում են շրջապատից դառնացած հոգու տրտունջը:

Սիրո մոտիվը Աճեմյանի մոտ արտահայտվել է մերթ իրբ վերհուշ, մերթ որպես երազ: Սակայն թե մեկ և թե մյուս դեպքում բանաստեղծը կարողացել է բացահայտել սիրո բարդ հոգեբանության առանձին կողմեր և ցուցադրել նրա պատճառած վիշտը:

Ահա, օրինակ, «Ծաղիկն երդման» գողտրիկ ոտանավորը, ուր լիրիկական հերոսը միայնակ նստած վերապրում է իր պատանեկան սիրո ռոմանտիկան, վերհիշում այն հրճվալից պահ, երբ ինքը սիրած աղջկա ձեռքից փախցնում է ծաղիկը իբրև սիրո նշանակ, մինչդեռ հեռացող տղայի ետևից աղջիկը ձայնում է.

Թառամեսցի ծաղիկդ այդ,

Այլ թառամի ոչ իմ սեր...¹¹

Սիրային վերապրումների նույնքան հուզիչ արտահայտություն են նաև «Սմբուլ» և մանավանդ «Հիշատակ»¹² բանաստեղծությունները: Վերջինը յուրատեսակ մի սիրավեպ է, որտեղ հեղինակը տեղի ու ժամանակի կոնկրետությամբ ներկայացնում է մի ամբողջ հոգեվիճակ՝ իր մանրամասնելով: Դիմելով երբեմնի սիրած աղջկան՝ նա ասում է.

Հիշե՛ս, հիշե՛ս, որ բարձր ի ծառ
Փորագրեի անվան քո տառ,
Հիշե՛ս համեստ մեր տուն, մեր գեղ,
Մեր պարտեզին թռչնոց գեղգեղ,
Ծաղկունքն հիշե՛ս և կանաչ խոտ,
Զորս օրորեր անուշիկ հով,
Երբ աղքատիկ և անծանոթ,
Բայց երջանիկ էինք սիրով...¹³

Սիրային այդ վերհուշը, սակայն, հետզհետե մոայլվում է, որովհետև նրա սիրածը, ինչպես պարզվում է, հետագայում ամուսնանում է ուրիշի հետ և դառնում իշխանուհի, որը և խոր ցավ է պատճառում բանաստեղծին.

Հիմա ծիփաս ոսկի բեհեզ,
Իշխանուհի կոչեն զքեզ...¹⁴

Խաճաքված սիրո այդ վիշտը խոր արձագանք է գտել մեր բանաստեղծի մի շարք երկերում, որոնցից առանձնապես արժեքավոր են «Այս սերը փուշ

¹¹ Նույն տեղում, էջ 83:

¹² Հետագայում վերանվանել է «Հիշե՛ս» (տես «Թրթռուն հանգեր», 1908, էջ 191):

¹³ Մ. Աճեմյան, ժպիտք և արտասուք, էջ 10:

¹⁴ Նույն տեղում, էջ 11:

է», «Մերուշե» ոտանավորները: Դրանց մեջ պարզ ու անպաճույճ տողերով արտահայտված է բաժանված սրտերի մորմոքը, որ հաճախ միահյուսվում է խուլ բողոքի հետ՝ ուղղված շրջապատի դեմ: Բանաստեղծը խոստովանում է, որ անգութ բախտի ծանր հարվածները իրեն պարզեցնել են «սև օրեր» և «ողբն է իր ճակատին գիր» դարձել: Ոչ ոք չի լսում իր հառաչանքները, չկա կարեկիյ հոգի և իր վշտաբեկ սրտի համար նույնիսկ ցուրտ է «էս արևը»: Եվ այդ մանավանդ այն պատճառով, որ ինչպես խնքն է ասում՝ «անմիտ աշխարհը նախանձել է մեզ»: Իսկ մերկ շահի վրա հիմնված բուրժուական աշխարհն է, ուր մարդու արժանապատվությունը չափվում է ոսկով ու դիրքով, ուր սիրող սըրտերը չեն հասնում իրար:

Այստեղից էլ առաջանում է բանաստեղծի դժգոհությունը շրջապատող իրականության դեմ, որը չի է հակասություններով: Աճեմյանը պարզ տեսնում է կյանքում տիրող անհավասարությունն ու անարդարությունը, այն խոր վիհը, որ մարդկանց բաժանում է երկու խմբի՝ մեծատոմսերի և մշակների: Այս իրողությունը նույնպես արտացոլվել է նրա բանաստեղծություններում, որոնցից մի քանիսը տողորված են սոցիալական խոր բովանդակությամբ: Հիշենք թեկուզ «Զմեռը», ուր հեղինակը պատմում է, թե որքան տարբեր են ընդունում տարվա այդ եղանակը հարուստներն ու աղքատները: Եթե առաջինների համար «ձմեռն է հեշտ», որովհետև անհոգաբար իրենց ժամանակը անց են կացնում թատրոններում ու պարահանդեսներում, ապա բոլորովին այլ է երկրորդների վիճակը:

Իսկ ուր փախչի մշակն ափսոս,
Ո՞վ յուր ոչխարն ու եզն հոգա.
Զյուն է դիզված այգվույն ակոս,
Ուր բողբոջե հույսն ապագա...¹⁵

Դառն հոգսերի բեռն տակ կբաժ և ապագայի հույսերով ապրող մշակին դիմելով՝ բանաստեղծն ասում է.

Նստե մշակ մութ քո անկյուն,
Նվ երանի թե այդ դաշտեր
Զմեռն առատ միշտ ծածկեր ձյուն,
Իսկ ոչ ամառն արյուն պատեր...¹⁶

Արևմտահայ աշխատավորի անապահով կյանքը, նրա սոցիալական ու ազգային վիշտը միշտ էլ հուզել են Աճեմյանին և նրա հոգին լցրել տագնապով: Նա մոտիկից տեսել ու զգացել է սոցիալական մի այնպիսի շարիք, որպիսին է պանդխտությունը, որի հոգեմաշ պատկերները ևս ամուր դրոշմել է իր երգերում: Դրանց մեջ սրտառու տողերով, երբեմն ժողովրդական ոճով արտացոլված են օտարություն մեկնողի տխուր մտորումները («Հրաժեշտ»), հայրենի եզերքից կտրված մարդու տանջալից առօրյան, նրա կարոտն ու սերը («Պանդուխտ»), որ ապրել է նաև բանաստեղծը:

Այդ տեսակետից առանձնապես ուշագրավ է «Մայիս» ոտանավորը, որս իր կառուցվածքով ու ներքին տրամադրությամբ հիշեցնում է Պեշկևիթաշյանը հռչակավոր «Գարունը»: Ինչպես վերջինում, այնպես էլ Աճեմյանի մոտ հայ-

15 Նույն տեղում, էջ 22:

16 Նույն տեղում:

րենասիրության գաղափարը դրսևորվել է ոչ թե բարձրագույն բառերով ու հոր-
դորներով, այլ մեղմ ու քնքուշ պատկերներով, վարակիչ հուզականությամբ:

Այդպիսին է նաև «Զվարթ մուսան», որտեղ բանաստեղծի սիրած ժողովրդական գուսանը թեպետ ողբում է հայրենի երկրի ծանր վիճակը, բայց իր երգերով խոսվում է քաջ նախնիների դարավոր քունը և լի է գալիք օրերի հավատով:

Լավատեսական այդ հայացքը պայմանավորված ժողովրդական խավերի նկատմամբ բանաստեղծի տածած կենդանի հետաքրքրությամբ ու ջերմ սիրով, որ աստիճանաբար հանգեցին շեշտված դեմոկրատական մտայնության՝ ստանալով բազմազան դրսևորումներ:

Այդ է պատճառը, որ նրա մոտ գտնում ենք ժողովրդական մոտիվներով հյուսված առանձին գործեր, որոնք ոչ միայն բովանդակությամբ, այլև գեղարվեստական ձևի իմաստով արտահայտում են հեղինակի դեմոկրատիզմը և ուշագրավ երևույթ են 70-ական թվականների արևմտահայ պոեզիայում: Բնորոշ է, որ դրանց մեջ բանաստեղծը սիրով երգում է ժողովրդի հույզերի ու տենչերի հարազատ թարգման գուսանին («Աշուղ»), հայրենակարոտ հայ աղջիկներին և նույնիսկ «Կախեթու գինին», ուր ոգեշնչված բացականչում է.

Օրհնյալ ըլլա այն մշակ,
Որ պատրաստեց զանուշակ
Կախեթու սև գինին...¹⁷

Լինելով դեմոկրատական խավերի հույզերի ու տրամադրությունների արտահայտիչ՝ Աճեմյանը հմտորեն օգտագործել է նաև երգիծանքը, որի սլաքներն ուղղված են տիրող վերնախավերի և ամենից առաջ բարձրաստիճան հոգևորականության դեմ: Այդ իմաստով նա արձագանքում էր իր մեծ ժամանակակից Պարոնյանին, որի հետ, ի դեպ, շփման շատ եզրեր ունի:

Աճեմյանը ևս մերկացրել է հայ հոգևորականության շահամուլությունը, կարերիվում ու դրա հետ կապված ներքին զվրթոցը: Մեր երգիծական պոեզիայի լավագույն էջերից է նրա «Ընտրություն պատրիարքի» բանաստեղծությունը: Այստեղ նկարագրված է, թե ինչպես «եպիսկոպոսք, երեսփոխանք» հավաքվել են պատրիարք ընտրելու, բայց այն աստիճան տարված են էգոիզմով և միմյանց նկատմամբ լցված նախանձով, որ մեկը մյուսին չի հավանում և յուրաքանչյուրը միայն իրեն է արժանի համարում ընտրվելու:

Վեղարավոր գիտեն զիրար,
Իր ընկերին ոչ ոք հավնի.
Յուրաքանչյուր ոք արժանի
Զինքը միայն կարծես հարմար
Ըլլալ Հայոց ազգին հովիվ,
Փառք և ոսկի դիզել անթիվ.
Թող նախ ըլլամ ես պատրիարք,
Ապա, կըսես, փլչես աշխարհք...¹⁸

17 Սույն տեղում, էջ 37:

18 Նույն տեղում, էջ 43:

Բանաստեղծն այնուհետև սուր ծաղրի է ենթարկում յուրաքանչյուր վեղարավոր ճառախոսի հավակնությունն ու սնամիտությունը և մահացու դատավճիռ արձակում սեպագետ այդ ամբոխի նկատմամբ:

Առավել նշանակալից ստեղծագործություն է Աճեմյանի «Հայ ապրինք» բանաստեղծությունը, որը պարոդիա լինելով Նար-Պեի (Խ. Գալֆայան) համանուն ոտանավորի, կրկնում է վերջինիս ձևը:

Հայտնի է, որ կղերամիտ այդ գործչի դեմ ժամանակին հանդես է եկել Նալբանդյանը, որն անողոքաբար մերկացրել է նրա կեղծ բարեսպաշտությունն ու դրա տակ թաքնված կնամոլությունը: Պայծառաճան հայ վաթսուականի օրինակով Նար-Պեին, այնուհետև, քննադատել է ամուսն Պարոնյանը՝ ոչընչացնող ծաղրի ենթարկելով նրա շահամոլությունն ու անսկզբունքայնությունը:

Կղերա-պահպանողական ունակցիայի դեմ հայ դեմոկրատիայի վարած այդ պայքարին ձայնակցեց նաև Աճեմյանը նշված պարոդիայով, որը մի շառաչումն ապտակ էր ազգային սփառարժույթամբ տարված հայ մտավորականությանը և նրա բերան հանդիսացող Նար-Պեին: Վերջինս հայ ազգության ներսում եղած սոցիալական հակամարտությունը սքողելու նպատակով խաղում էր ժողովրդի ազգային զգացմունքների հետ, խմբակահարում հայի «սերճ անունն» ու նրա սուրբ աշխարհը, որպեսզի մթաթնի աշխատավորության դասակարգային գիտակցությունը, խլացնի նրա բողոքի ձայնն ու ըմբոստացումը ընդդեմ նաև հայ հարստահարի՜նքի: Խավարի ու թշվառության մատնված հայ բնաշխարհը նա հռչակում է «շքեղ հայրենիք» և դրանով իսկ քարոզում ազգային սնապարծությունն ու մեկուսացում, հայ ժողովրդին հակադրում մյուս ժողովուրդներին:

Հայ ապրինք.— ո՞ր ալզ կա Հայուն նման,
Որ ոմենա հին պարծանքներ այսքան,
Ո՞ր ազգ Հայուն պես շքեղ հայրենիք
ն՝ դրայրք, հայ ապրինք¹⁹:

Ահա այդ մտայնության դեմ է ծառանում Աճեմյանը և ցասկոտ տողերով մերկացնում ազգությունը դիմակ դարձրած «շահասեր անձանց», նրանց անվանելով «ազգի սուտ պաշտպաններ»:

Մեր տրիտուր վիճակ, մեր սրտից մորմոք
Դիտելով աչոք ցուրտ և անողոր,
Ալզին սուտ պաշտպանք՝ շահասեր անձինք
Գոչեն՝ Հայ ապրինք:
Շատ չարիք անցան մեր դժբախտ գլխեն,
Դեռ շատ նետեր ալ մեր սիրտը մըղեն,
Բ սպանդ զրկելով դմել՝ վերդ գառինք
Կըսեն՝ Հայ ապրինք²⁰:

Եվ այսպես, հեղինակը քայլ առ քայլ բացահայտում է վերնախավների նողկալի դեմքը, ցուցադրում նրանց խոսքի ու գործի ադադակող հակասությունը, պարադիտային կյանքը և ժողովրդին հասցրած անհամար աղետները: Նկատի ունենալով այդ բոլորը՝ նա վայրալից գոչում է:

19 «Սովորք Հայկականք», Կ. Պոլիս, 1874, էջ 154:

20 Մ. Աճեմյան, Ժպիտք և արտասուք, էջ 46:

Հերիք դահիճներ, մատնիչներ Հուդա,
 Ձեռքերնուս ձուլեն գերության շղթա,
 Հերիք է այսքան վիշտ ու նախատինք,
 Հապա Հայ ապրիլնք...²¹

Բանաստեղծն այնուհետև զգուշացնում է իր հայրենակիցներին չխաբվել «ստահող քարուկներով այն «ազգասերներին», որոնք «հացն ուտեն որբոց՝ խմեն արտասուք» և օտարի սրինգի խորթ հնչյուններով երգեն «Հայ ապրիլնք»:

Շատ կողմերով արժեքավոր և բարձրարվեստ իր բանաստեղծությունը ԱՃԵՄՅԱՆԻ ավարտում է հետևյալ իմաստալից տողերով.

Հայ ապրիլնք այո՛ և ոչ իբրև վատ,
 Ոչ իբրև գերի, և ի մեր ճակատ
 Վեհ մտածմանց հետ փայլին սուրբ քրտինք,
 Այսպես Հայ ապրիլնք²²:

Իր տեսակի մեջ այս բանաստեղծությունը ոչ միայն հեղինակի, այլև անցյալի մեր գրականության լավագույն գործերից է, որն իր մերկացնող ուժը սրահպանեց նաև հետագայում՝ բուրժուա-նացիոնալիստական ինտելիգենցիայի նկատմամբ:

ԱՃԵՄՅԱՆԻ խստորեն քննադատել է նաև, այսպիսի կոչված, «Ազգային սահմանադրությունը», որն ինչպես հայտնի է, որևէ բարեփոխություն չմտցրեց արևմտահայ ժողովրդի տնտեսական ու իրավական ծանր դրության մեջ: Ի հակադրություն իշխող վերնախավի ներկայացուցիչների, որոնք ոգևորված փառաբանում էին ազգային-եկեղեցական այդ «թղթի կտորը», դեմոկրատական միտքը հիմնականում բացասական վերաբերմունք ցուցաբերեց նրա հանդեպ:

Դրա գեղարվեստական արձագանքներից է ԱՃԵՄՅԱՆԻ «Սահմանադրություն Հայոց» ոտանավորը, ուր այլաբանական պատկերներով ծաղրված է ազգային-եկեղեցական այդ կանոնադրությունը և նրա հետևանքները:

Նշված մոտիվներից բացի ԱՃԵՄՅԱՆԻ բանաստեղծությունների առաջին գրքում տեղ են գտել նաև այլ կարգի գործեր, որոնք դրսևորում են նրա խառնըվածքի ուրիշ կողմեր: Մենք նկատի տենենք առաջին հերթին հումանիստական այն ավելի մտորումները, որոնցով հեղինակը հանդես է գալիս որպես մարդու և մարդկայնության անկեղծ բարեկամ: Նա ցույց է տալիս կյանքից դառնացած հոգիների, մանավանդ պատանիների վաղաժամ կործանումը («Ի վաղամեռիկ»), որ այնքան բնորոշ է սեփականատիրական հասարակարգի համար: «Սգավոր մոր ողբն» է երգում նա համաձայն բանաստեղծության մեջ, որ հագեցած է մայրական սիրո անսլարփակ վշտով և այլն:

ԱՃԵՄՅԱՆԻ համար ևս ստեղծագործական ներշնչումների աղբյուր է եղել նոր սերունդը: Մերթ նա երգում է օրորոցի մանկան («Մանուկ օրորանի») և խորհուրդ տալիս նրան ընտրել ոչ թե վաղանցիկ փառքի, այլ սիրո ասպարեզ, ապրել ոչ թե ոսկեզարդ պալատում, այլ անդորր հյուզակում, մերթ էլ ներդրում երիտասարդությանը («Ցնորք երիտասարդի»), փառաբանում այն ներքին զորությունն ու նեղամիտ, որ նրան մղում են խիզախումների ու խոյացումների:

21 Նույն տեղում, էջ 47:

22 Նույն տեղում:

Բանաստեղծի խորին համոզմամբ «երիտասարդը սկիզբն է ամեն ինչի», շքեղ մի գեղեցկություն, որ վաղաճիկ է ինչպես շողացող կայծակը:

Աճեմյանի այս գրքում արդեն իսկ նկատելի են նաև խոհական շեշտեր, որոնցով հեղինակը ձգտում է հասնել մտքի ու զգացմունքի ներդաշնակ միասնության: Նա խորհում է երբեմն մահվան շուրջը և անիծում այն որպես անդիմադրելի աղետ («Առ մահ»), երբեմն էլ ժամանակի ու տարածության մասին: «Ժամանակ» բանաստեղծության մեջ, օրինակ, Աճեմյանը ցույց է տալիս, որ ամեն ինչ տեղի է ունենում ժամանակի մեջ, ոթին լուրորն են սպասում, իսկ նա՝ ոչ ոքի...:

Վերջապես նշենք, որ Աճեմյանը ներբողներ է ձոնել իր ժամանակի որոշ գործիչների (Թ. Թերզյան, Խ. Գարագաշյան, Կ. Պալյան և այլն), որոնց նկատմամբ տածած հարգանքն ու սերը երբեմն հասնում է հիպերբոլիկ չափերի:

Ամփոփելով մեր խոսքը պետք է նկատել հետևյալը. իր ստեղծագործական կյանքի վաղ որոնումների շրջանում Աճեմյանն այս ու այն չափով կրել է Մխիթարյան բանաստեղծության և հատկապես Ալիշանի ազդեցությունը, որն արտահայտվել է թե՛ բովանդակությամբ և թե՛ ձևի իմաստով: Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը հետագայում ոմանք նրան անվերապահորեն հայտարարել են «Մեծ Նահապետի աշակերտը»²³:

Աճեմյանը, սակայն, չմնաց այդ աստիճանի վրա. աշակերտը շուտով հաղթահարեց ուսուցչի ստեղծագործությանը հատուկ արվեստականությունն ու ռոմանտիկական ճախրանքը և հաստատապես ոտք դրեց ռեալիզմի ուղին: Դա ինքնին լուրջ առաջադիմություն էր արևմտահայ բանաստեղծության զարգացման ճանապարհին, որի կարևոր հանգրվաններից մեկը հենց Աճեմյանի «Ժպիտք և արտասուք» ժողովածուն է:

Ուշագիտ քննելով բանաստեղծությունների այդ գիրքը, մենք հանգում ենք այն հետևության, որ Աճեմյանի խառնվածքի ու գրելակերպի հիմնական առանձնահատկությունները որոշակիորեն զրոսկորվել են արդեն նրա տաղանդի առաջին ցուրերում:

Հարկավ, դրանք ավելի խորացան ու ծավալվեցին հեղինակի հաջորդ ժողովածուներում, որոնց քննությունը, սակայն, սույն հոդվածի նպատակից դուրս է:

²³ «Բազմավեպ», 1909, № 2, էջ 92.